Museum and City officials are on schedule to complete the concept design, traffic, parking, economic, and environmental studies in time for the consideration of the ground lease agreement by the Glendale City Council during the first quarter of 2017.

Earlier this month the Armenian American Museum unveiled its concept design at a gathering of more than 400 community members. The iconic design incorporates the rock formations and mountain range found in Armenia with the San Gabriel Mountains rising to the north of Glendale. Museum officials will be organizing community events and meetings to invite feedback on the design and location from the public.

For more information visit www.ArmenianAmericanMuseum.org

Meridian School Unveils Plaques for the Newly Constructed Bezjian Family Building



SHERMAN OAKS – On Friday, December 9, 2016, the C & E Meridian Armenian Evangelical School held a special ceremony to unveil plaques for the newly constructed Bezjian Family Building, as well as for the library, science lab, four classrooms and the coach's office. The ceremony began with a blessing offered by Rev. Hendrick Shanazarian.

Following the plaque unveiling ceremony, guests attended the Board of Directors' annual Christmas party and appreciation dinner held in the School's Aram & Anahis D. Boolghoorjian Hall. Following the invocation by Minister to the Union, Rev. Berdj Djambazian, guests were treated to a delicious dinner and a delightful musical performance by Ms. Nectarine Chilyan who sang and played the Kanon. The evening's celebrations were concluded by singing of Christmas carols led by Rev. & Mrs. Vatche and Lena Ekmekjian.

Construction of the new building

to the United States to continue her education comes with its own unique encounters, both in school and life itself, which adds to the immigrant's narrative.

Alice Ketabgian received an M.S. in Human Physiology from the UCLA School of Medicine in 1968 and later became a registered dietitian. After working as a clinical dietitian in her husband Dr. Gregory Ketabgian's internal medicine office for a number of years, she became the office manager and functioned in that capacity for the following 25 years until their retirement in 2004.

She will be introduced by her

daughter, Dr. Tamara Ketabgian, Professor of English Literature at Beloit College, who will also give a short talk on challenges of writing memoirs. Dr. Ketabgian is a graduate of Harvard College and received a Ph.D. from Princeton University. At Beloit College, she teaches classes both in her specialty and in a variety of interdisciplinary topics, including modern urban culture, life writing, and autobiography.


We thank our benefactors and generous sponsors. For information on other rooms available for sponsorship you may call Dr. Ivan Shnorhokian at (412) 759-2020 or Dr. Vahe Nalbandian at (818) 507-9848.

For more information about this program, contact Ararat-Eskijian Museum at (747) 500-7585 or Ararat-eskijian-museum@netzero.net, or NAASR at (617) 489-1610 or hq@naasr.org.

Alice Ketabgian to Present "Life in Istanbul: a Family's Odyssey" at Ararat-Eskijian

MISSION HILLS -- Alice Ketabgian will present her recent book depicting her life's experiences while growing up in Istanbul as the child of survivors of the Armenian Genocide on Sunday, January 8, 2017, at 4:00 p.m., at the Ararat-Eskijian Museum, Sheen Chapel, 15105 Mission Hills Road, Mission Hills, CA. The program is sponsored by the Ararat-Eskijian Museum, the Organization of Istanbul Armenians, and the National Association for Armenian Studies and Research (NAASR).

Ketabgian describes the later stages of the Genocide perpetrated by the Turkish government against its minorities, while living in constant fear for their lives as Christians in a Muslim world. The book is partly a story of resilience while attempting to find a way of getting out of a suffocating



environment, as well as a story of the past events of survival that her ancestors experienced. Eventual relocation

Hassan Rouhani's Visit Deepens Economic Ties

Continued from page 1

the Armenian and Iranian power grids. It is slated for completion by 2019.


Sarkisian and Rouhani stressed the importance of the new line in their joint communique. The statement also reaffirmed Yerevan's strong support for the signing of a free-trade deal between Iran and the Eurasian Economic Union, a Russian-led trade bloc which Armenia joined two years ago.

One of the five Armenian-Iranian agreements signed during Rouhani's visit calls for a "joint use" of the sole

border crossing between the two countries. It was not immediately clear whether this has to do with a "free economic zone" which is expected to be created along Armenia's border with Iran. Armenian officials have said that Iranian entrepreneurs will be able to set up manufacturing firms in the tax-free zone.

Rouhani and Sarkisian also discussed regional security -- and the Karabakh conflict in particular -- at their meeting held before the two men opened an Armenian-Iranian business forum in Yerevan.

Յովհաննէս Թումանեանին հասցէագրուած՝ Գրիգոր Վանցեանի նամակներն ամփոփուել են նորընծայ գրքում



Լեւոն Ագրոյեան

Անուանի գրականագէտ, Յովհաննէս Թումանեանի ժամանակակից ու ընկեր Գրիգոր Վանցեանի՝ ամենայն հայոց բանաստեղծին հասցէագրուած 19 նամակներն ամփոփուել են «Ուսումնասիրութիւններ եւ հրապարակումներ» վերնագիրը կրող հատորակում, որը լոյս է ընծայուել օրերս՝ ընթերցողին ներկայացնելով նաեւ գրականագէտի կենսագրական դրուագները: Վանցեանի աշխատութիւնների երրորդ հատորի կազմողը՝ պատմական գիտութիւնների թեկնածու Վահէ Սարգսեանն «Արմենայրես»-ին տեղեկացրեց, որ գրքի տպագրութիւնը երաշխաւորել է Հայաստանի գիտութիւնների ազգային ակադեմիայի պատմութեան ինստիտուտի գիտնորհուրդը, եւ այն լոյս է ընծայուել «Զաւարթին աջակցութիւն» հիմնադրամի (ԶԱՀ) կողմից:

Գրիգոր Վանցեանի նախորդ երկու հատորները, որոնք տպագրուել են 2015 եւ 2016 թուականներին, նոյնպէս լոյս էին տեսել «ԶԱՀ»-ի մեկենասութեամբ: Հենց այդ գրքերի շնորհիւ մեր ժամանակակիցները ծանօթացան ժամանակին մեծ ճանաչում ունեցած, բայց մեր օրերում քչերին ծանօթ Գրիգոր Վանցեանի կեանքին ու նրա թողած հարուստ գրական ժառանգութեանը:

Գրիգոր Վանցեանի երկերի ժողովածուի նախորդ երկու հատորներում գետեղուած են հայագէտի գիտական եւ հրապարակախօսական աշխատանքները, նամակները, թարգմանութիւններն ու վեց գրքերը: Ներկայ հատորեակը բաղկացած է երկու խոշոր բաժիններից: Առաջին բաժնում ամփոփուած են կենսագրական բնոյթի տեղեկութիւնները, որոնք սիրուած են զանազան հանրագիտարաններում, անգամ «Բազմավէպ» հանդէսում:

Ժամանակին Գրիգոր Վանցեանի գրքերն ու գիտական հրապարակումները մշտապէս եղել են մամուլի ուշադրութեան կեդրոնում: Դրանց անդրադարձել ու դրուատանքի խօսքեր են ասել ժամանակի այնպիսի հանրայն պարբերականներ, ինչպիսիք են

«Հանդէս Ամսօրեայ», «Արարատ», «Բազմավէպ», «Մուրճ», «Երկիր», «Յոյս», «Մշակ», «Նոր դար», «Զարկ»:

Հատորեակի երկրորդ բաժինն ամբողջութեամբ նուիրուած է Գրիգոր Վանցեանի եւ Յովհաննէս Թումանեանի փոխյարաբերութիւններին: «Գրիգոր Վանցեանի նամակները Յովհաննէս Թումանեանին», «Յովհաննէս Թումանեանի նամակներն ընկերներին եւ հարազատներին», «Ընկերների նամակները Յովհաննէս Թումանեանին» խորագրի ներքոյ հատորում գետեղուած են Վանցեանի գրած 19 նամակները՝ հասցէագրուած Յովհաննէս Թումանեանին: Ընթերցողը երեւի կը գարմանայ, թէ ինչու է հատորում չկան Թումանեանի նամակներից, որ Մեծ Լոռեցին ուղարկել է Գրիգոր Վանցեանին: Պարզ է, որ նամակագրութիւնը միակողմանի չի եղել: Յաւոք, այդպիսիք չեն պահանջուել, կորել են, կամ դրանց տեղը առայժմ յայտնի չէ: Փոխարէնը հատորում տեղ են գտել Թումանեանի՝ ընկերներին յղուած 9 նամակները, ինչպէս նաեւ ընկերների՝ Թումանեանին ուղարկած 7 նամակները: Այդ նամակներն ընդգրկուած են հատորում, քանզի դրանցում յիշատակուած է Գրիգոր Վանցեանի անունը:

Թումանեանի եւ Վանցեանի ներսիրտական եւ յետագայ տարիների ջերմ յարաբերութիւնների մասին են վկայում Թումանեանի «Աղօթք» եւ «Կանչ» բանաստեղծութիւնները: Ահա թէ ինչու դրանք եւս տեղ են գտել վերոյիշեալ հատորում:

Ինչպէս ընդգծեց Վահէ Սարգսեանը, Յովհաննէս Թումանեանի ծոցատետրում եղած գրառումից պարզուած է, որ հենց Գրիգոր Վանցեանն է նրան պատմել Զավարթում տարածուած «Փարւանա» լեզենդի մասին, ինչը առիթ է տուել մեծ բանաստեղծին գրելու իր հանրայն «Փարւանա» պոէմը:

Գիրքը լոյս է տեսել բարերար Սերգէյ Վանցյանի միջոցներով եւ այն ձօնուած է Վանցեանների գերդաստանի երկու արժանաւոր ներկայացուցիչներ Գրիգոր եւ Լորենց Վանցեան եղբայրների յոբելեաններին:

ՍՏԵՂԾՈՒԱԾ Է ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՍԻՄՖՈՆԻՔ ՆՈՒԱԳԱՆՈՒՄԲ



«Ես ուզում եմ շնորհաւորել բոլորիս, որովհետեւ մեր գաղափարը, Համահայկական սիմֆոնիք նուագախմբի գաղափարը այլեւս իրականութիւն է», - այսօր հրաւիրած ասուլիսին յայտարարեց Մշակույթի նախարար Արմէն Ամիրեան: Ասուլիսին, որուն մասնակցած էր նաեւ Հայաստանի ֆիլհարմոնիք նուագախումբի տնօրէն Ռուզան Սիրունեան, ներկայացուց նուագախումբի յառաջիկայ ծրագրերը: Երբ Մշակույթի նախարարը ՀՀ նախագահի հետ հանդիպման ժամանակ յայտնեց Համահայկական նուագախումբ ստեղծելու մտադրանքն, շատերը տարակուսեցան, թէ որն է նուագախումբի նպատակը: Այսօր պատասխանելով Արմէն Ամիրեան ըսաւ. «Միասնականութիւն եւ նորից միասնականութիւն: Գաղափարի հիմքում ընկած է միասնականութեան խնդիրը, որ-

պէսզի մենք կարողանանք մէկ նուագախմբի մէջ Համախմբենք աշխարհով մէկ սփռուած մեր հայրենակիցներին»:

Ռուզան Սիրունեան տեղեկացուց, որ արդէն յայտեր ստացած են 19 երկիրներ պարող հայ երաժիշտներէ. «Պէտք է ուրախութեամբ ասեմ, որ նոյնիսկ մենք ունենք Սիրիայից՝ Դամասկոսից մէկ երաժիշտ, որը նոյնպէս կը մասնակցի: Եւրոպական շատ երկրներից՝ Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Իսպանիա, Փորթուգալիա, Դանիա: Եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներից, Գանատայից: Ունենք Վրաստանից: Փորձում ենք Պարսկաստանում գտնել այնպիսի հայեր, որոնք կարող են մասնակցել այս ծրագրին»:

Նախարար Ամիրեան՝ նշեց. «Նուագախմբի համերգը դեկտեմբերի 15-ին կ'ընդհատուի»:

Շար.ը էջ 15

Հետաքրքրուած եմք իրենց փոխարժեքով ստանալ՝

- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Ցեղասպանութեան հետ առընչուած գիրքեր

Եթէ ունիք նման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել հեռաձայնելով կամ e-mailով՝ ՎԱՀԷ Ա.ԶԱ.ՊԱ.ՀԵԱՆԻՆ:

Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-354-5924
vamedia@yahoo.com



Արցախի Նոր Կարմիրաւան Գիւղին Մէջ Զնագէտները Մարդակերպ Կոթողներ, Սափոր եւ Ուլունքներ Յայտնաբերած են



Արցախի Մարտակերտի շրջանի Նոր Կարմիրաւան գիւղի տարածքին՝ Հոկտեմբերին սկսած պեղումները արձանագրած են հետաքրքրական փաստեր: Այս մասին կը հաղորդէ Armenpress.am-ը:

Պատմական գիտութիւններու թեկնածու, «Պատմական Միջա-վայրի Պահպանութեան Պետական Ծառայութիւն» ՊՈԱԿ-ի գիտական գծով փոխտնօրէն Նժդէհ Երանեան յայտնած է, թէ ուսումնա-սիրութիւնները իրականացած են երկու հիմնական պեղավայրի մէջ՝ կոթողներու շրջակայքը եւ անոնցմէ քիչ մը դէպի հիւսիս, 2000-ական թուականներուն կառուցուած ջրանցքին մօտ: «Արտաքին նիւթի հետախուզական աշխատանքներու ժամանակ՝ ջրանցքի յատակին պատահաբար յայտնաբերուեցաւ սափոր: Յայտնաբերուեցան նաեւ 18 տարբեր անօթներ, որոնք կը թուագրուին Ք.Ա. 9-7-րդ դարերով, եւ շարք մը ուլունքներ», - ըսած է ան:

Հնագէտը նշած է, որ պեղավայրին մէջ կատարած աշխատանքները թոյլ կու տան եզրակացնելու, որ այս տարածքը

բնակեցուած եղած է Ք.Ա. 1-ին հազարամեակի սկիզբէն: Ուստի անհրաժեշտ են առաւել լայնածաւալ պեղումներ, որոնք թոյլ պիտի տան վերականգնելու այդ շրջանի պատմութիւնը եւ մշակոյթը:

Նժդէհ Երանեան արժեւորած է նաեւ Նոր Կարմիրաւան գիւղի տարածքին տեղի բնակիչներէն մէկուն կողմէ նկատուած մարդակերպ կոթողները: Ապա սկսած են կոթողներու տարածքի հետա-խուզական պեղումները: «Պեղում-ները, որոնք տեւած են շուրջ երկու շաբաթ, կը կրէին հետախուզական բնոյթ, որուն նպատակն էր ճշդել արդեօք կոթողները կը գտնուին իրենց կանգնեցման նախնական վայրը: Իբրեւ արդիւնք կրնանք վաւերացնել, որ կոթողները՝ ամենայն հաւանականութեամբ՝ կը գտնուին իրենց միջավայրին մէջ: Սակայն, վերջնական եզրակացութիւն ընելու համար, հարկաւոր է յետազային շարունակել հնագիտական աշխատանքները», - ըսած է Երանեան:

Անոր խօսքով՝ կոթողներու գիտական հետազոտութիւնը մաս կը կազմէ Արցախի Տիգրանակերտի

Սփիւռքի Նախարարութիւնը Զայկական Զամայնքներ «Յայտնաբերած է» Գոսթա Ռիքայի եւ Նիքարակուայի մէջ



Վերջերս Հայկական համայնք-ները յայտնաբերած են եւս 2 երկիրներու մէջ՝ Գոսթա Ռիքա՝ 400 հայ, եւ Նիքարակուա՝ 380 հայ: Այս մասին 27 Դեկտեմբերին՝ ամփոփիչ մամուլոյ ասուլիսի ժամանակ, ըսած է սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանը: Անոր խօսքով՝ աշխարհի մէջ կայ 30 հազար Հայկական կազմակերպութիւն, 38 համա-

Հայկական կազմակերպութիւն 20 երկիրներու մէջ, 1004 Հայկական դպրոց:

«Միայն այս տարի եւս 26 Հայկական դպրոց է բացուել: Աշխարհում մենք 821 համայնք ունենք, որոնց հետ աշխատում ենք: 112 երկիրներում ունենք Հայկական կառույցներ եւ կազմակերպութիւններ», - ըսած է Հրանուշ Յակոբեան:

Եւ շրջակայքի ուսումնասիրութեան: Արցախի մէջ ներկայիս յայտնի է շուրջ երեք տասնեակ նմանատիպ մարդակերպ կոթող: Վերջինները, սակայն, կը գտնուին տեղաշարժած վիճակի մէջ: Ուստի, Նոր Կարմիրաւանի մարդակերպ կոթողներուն հետազոտութիւնը, անոնց հնագիտական միջավայրին վաւերացումը պիտի պատասխանէ այս կոթողներուն վերաբերեալ շարք մը կարեւոր հարցերու: «Կոթող-ներու ուսումնասիրութիւնը կարեւոր է ինչպէս Արցախի եւ

Ուտիքի, այնպէս եւ Կովկասի ու ողջ Առաջաւոր Ասիոյ Ք.Ա. 1-ին հազարամեակի պատմութեան եւ մշակոյթին համար: Հետեւաբար, անոնց ուսումնասիրութիւնը եւ ներկայացումը Արցախի վրայ պիտի գրաւէ տարածաշրջանով հետաքրքրուող այլ մասնագէտներու եւ լայն շրջանակներու հետաքրքրութիւնը եւս», - ընդգծած է «Պատմական Միջավայրի Պահպանութեան Պետական Ծառայութիւն» ՊՈԱԿ-ի գիտական գծով փոխտնօրէնը:

ՍՏԵՂՈՒԹ Է ԶԱՄԱՅԱՅԱԿԱՆ

Շարունակուած էջ 14-էն

րելու են երեք դիրիժորներ՝ էդուարդ Թովմեան, Կարէն Տուրգարեան եւ Սերգէյ Սմբատեան»:

Արմէն Ամիրեանը նշեց նաեւ, որ երաժիշտները անվճար պիտի աշխատին. «Ես կարծում եմ, Ապրիլ 24-ի համար մենք իրաւունք չունենք վճար պահանջելու, առաւել եւս իրաւունք չունենք վճար վճարելու»:

Համահայկական միասնական նուազախումբի առաջին համերգները կը կայանան Երեւանի մէջ Հայոց ցեղասպանութեան յիշատակի ապրիլեան օրերուն, եւ առաջին համերգին Մշակոյթի նախարարի պատուէրով կը հնչէ Տիգրան Մանսուրեանի նոր ստեղծագործութիւնը՝ նուիրուած ապրիլեան քառօրեայ պատերազմին նահատակ-

ուած զինուորներու յիշատակին:

Մշակոյթի նախարարը հանդէս եկաւ եւս մէկ յայտարարութեամբ. «Մեր խորին համոզմամբ, մեր իրականութեան մէջ պակասում է շատ կարեւոր մի բառ՝ շնորհակալութիւն բառը: Դեկտեմբերի 24-ից սկսած յայտարարում են շնորհակալութեան շաբաթ, որի հետ գուզորդում են վիրթուալ տարածքում հայտառ գրելու շաբաթ: Մեր կայքէջում, մեր ֆէյսպուքեան էջում նաեւ յատուկ էջ է բացուում, յատուկ մաս է բացուում, որին կարող էք Ձեր շնորհակալութեան հայտառ գրառումներն անել: Լաւագոյն գրառումը կ'արժանանայ գլխաւոր մրցանակին: Ինչպէս նաեւ կան ոչ-գլխաւոր մրցանակներ: Գլխաւոր մրցանակը Հայկական արտադրութեան «Արմֆոն» հեռախօսն է»:



**Ջօրացիւք
Օժանդակենք
Փրկենք**

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianreliefund.org




ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN APOSTOLIC CHURCH

ROSE PARADE VIEWING AND BREAKFAST

Please join us on Monday, January 2, 2017 @7:30a.m. for special VIP seating and viewing of the Rose Parade. Enjoy a Delicious Breakfast of Soujouk & egg Prepared by Fr. Sarkis.

Let's get together and cheer for the ARMENIAN FLOAT

as it passes by our church!

Space is limited! Please call to reserve your place.

For reservations please contact

VAHE – 562-715-8730
or
VERA – 626-449-1523

Admission: \$15/Adults
\$10/Kids

ԱՄԱՆՈՐԻ ՏՕՆԱԾԱՌ CHRISTMASS TREE

ՊՕՐՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԱԳԻՍԵԱՆ

Տօնածառ: Արմինա Լեոնաշխարհի արեւորդի Արմին-հայերը ծառին պաշտամունք էին նուիրել, բանաստեղծներ հողի տաքուկ սրտին ծառեր դրել որպէս խաչեր իրենց նախնիներին: Ծառ, բնութեան հրաշքն է այն, կանաչ փռում լեռներին, հանդերին, գարնան հետ գարուն դառնում, ծաղկում, մայրանում: Արմին-հայերը, հեռու հարաւի Բաբելոնի Բել անունով թագաւորի ամբոխի դէմ տարած յաղթանակը, իրենց նոր տարեթիւ՝ մ.թ.ա. 2492 թուականի Օգոստոսի 11-ը եղաւ: Նաւասարդ-Ամանոր՝ Արմին հայերի Ամանոր աստուծոյ տօնախմբութեան օր, Հռովմի կայսր Յուլիոս Կեսարի հռչակած տոմարի առաջին օր՝ Յունուարի 1, երբ արեւը հիւանդ էր, նրա ատրուշանի կրակն էր յանգում, ծառերը իրենց ծիածան զգեստն էին փռում մրսող հողին, ծաղիկները իրենց աչուկները փակում, անտառները սպիտակ հագուստ կապում, բուքը զարկում մրսած ծառերին, ծովերի ջրերին, ծովահարսերի անդորրը խռովում:

Նաւասարդ-Ամանոր, իւրաքանչիւր հայու տուն տօնածառ է կանգուն, զարդարուած նորահարսի նման, արեւաւառ լապտերիկներ լոյս հոսում նրա վրայ: Դեռեւս Քրիստոնէութիւնից շատ վաղ, ձմեռ ատեն կանաչը յատուկ նշանակութիւն է ունեցել: Տօնական օրերին, իրենց տները զարդարել էին եղեւնու, սոճիի, մայրի ծառերի ճիւղերով: Կարծել էին, որ անոնք իրենց հեռու կը պահէին կախարչներէն ու չար ոգիներէն: Հին ժողովուրդները հաւատացել էին, որ արեւը աստուած է, նրա հիւանդ լինելու պատճառաւ է, որ ձմեռ լինում: Ձմեռային արեւադարձը տօնախմբել էին Դեկտեմբեր ամսուայ 21-22 ին, որ արեւ աստուածը նորէն պիտի առողջանար, հզօրանար, ծառերը նորէն պիտի կանաչէին, ամառը նորէն պիտի վերադառնար, նորէն գարուն պիտի լինէր:

Եգիպտացիների աստուած ՌԱ-ի (նոյն իմաստով այնտեղ հասած Հայոց ԱՐ՝ կրակի, լոյսի աստուածը) թագին բազմած էր բոցավառ արեւը: Ձմեռային արեւադարձին, երբ ՌԱ-ն ապաքինած էին համարել, իրենց տներ էին բերել արմաւենի կանաչ ճիւղեր, այն համարել մահուան նկատմամբ յաղթանակի խորհրդանշանը:

Գերմանների երկիր՝ Գերմանիային է վերագրուում տօնածառի աւանդութեան սկզբնաւորումը, երբ որ քրիստոնեաները սկսել էին իրենց տներ բերած ծառերը զարդարել: Հայոց աշխարհից գերմանների երկիր հաւաքական եկած Պաւլիկեանների ուսմունքին հետեւորդ, 16-րդ դարում քրոստոնէական եկեղեցու բարեփոխիչ, գերմանացի Մարտին Լուդերը առաջինը վարուած մոմեր էր կախել իր տան տօնածառին: Ձմեռային մի գիշեր, տուն վերադառնալու ատեն, հմայուել էր կանաչների արանքներից շողշողացող աստղերի փայլաւոր կեղծանցները համար, տանը մի փոքրիկ ծառ էր կանգնեցրել ու նրա ճիւղերից կապել վառուող

մոմեր:

Ինչպէս քրիստոնէական շատ տօներ, այնպէս էլ տօնածառի սովորութիւնը շատ ուշ էր ընդունուել Ամերիկայի նորաբնակների շրջանում: 1659 թուականին, Մասսաչուսեթս նահանգի գերագոյն ատենը օրէնք էր ընդունել Դեկտեբերի 25-ի տօնակատարութիւնը պատժական յանցանք համարել, մարդկանց տուգանել իրենց տներում դրուած տօնածառերին զարդարանքեր կախելը: Այդ օրէնքը շարունակուել էր գործել մինչեւ 19-րդ դար, երբ երկրում Գերմանացի ու Հոլանտացի զաղթականների հոսքը ականահարել էր այդ արգելքը:

1846 թուականին, Անգլիայի Վիկտորիա թագուհին, գերմանացի ամուսնու եւ իր զաւակների հետ տօնածառի շուրջ բոլորը կանգնած՝ պատկերուած էր «Լոնտոն Նէվս» լրագրի երեսին: Այն սիրով էր ընդունուել Ամերիկայի արեւելեան ափի ընկերակցութեան մարդկանց կողմից: Եւ տներում Christmas Tree-Տօնածառը դնելը սկսել էր մուտք գործել Ամերիկայի Միացեալ Նահանգներ: 1890 թուականներին, ամբողջ Ամերիկայի Միացեալ Նահանգներում Տօնածառը սկսել էր ժողովրդականութիւն վայելել, իւրաքանչիւր ընտանիքում այն դարձել էր ամերիկեան աւանդական սովորութիւն, վերածուել շքեղ տօնախմբութեան: Երկիր քաղաքները ու գիւղերը վառուած են իրենց նախնիների պաշտած լոյսով, քրիստոնէական հաւատի դրուագների լոյսապայծառ պատկերներով:

Արմին-հայերը, գերմանների նման սկսել էին Նաւասարդ-Ամանորի տօնախմբութեանը տներում տօնածառ զարդարել: Իրենց աշխարհի անտառներում հազարհազար տեսակի վայրի ու պտղատու ծառեր էին աճում, սակայն



եղեւնու համատարած անտառներ չկային, այն մասամբ աճում էր գեղատեսիլ Դիլիճանի անտառներում: Երբեմն Ռուսաստանից եղեւնու տնկիներն էին բերում, անոնք սուղ էին՝ ոչ բոլորին հասանելի: Նրանց փոխարէն Դիլիճանի անտառներում աճած եղեւնիների ճիւղեր էին հատանում, վաճառում փողոցների յարմար տեղանքներում: Մշտադաւար եղեւնիների տնկիները, մայրացած եղեւնիների խոշոր ճիւղերը՝ իրենց տները կանաչ լոյսով պիտի լցնէին, նրանց պիտի պճնէին նորահարսի պէս, իրենց նախնիների հոգիների լոյսը այնտեղ պիտի վառուէր: Իրենցից շատ հեռու գերմանների աւանդութիւնն էր հասել երկիր, հոգ չէ, ամբողջ աշխարհն էր այն որդեգրել:

Հռովմի՝ «Պօղոս Յովհաննէս Երկրորդ» պապը սկզբնաւորել է վատիկանի հրապարակում տօնածառ կանգնեցնելու կարգը: Ըստ Պապի՝ այն դարձել է Քրիստոսի ծննդեան արարողութեան մի մասը, համարուել Քրիստոսի խորհրդանշանը: Այդ հին սովորութիւնը մարդկային կեանքի ցնծացումն է, ձմեռուայնրա յարատեւ կանաչը անմեռ կեանքի նշանն է, այն «կեանքի ծառ»-ն է: Տօնածառը յիշեցնում է Քրիստոսի պատկերը, իր փայլիլոյ լոյսերով չիշեց-

նում Քրիստոսի ծնունդը:

Արմին-հայերի ուստանի վարդակերտ հրապարակում վեր էր խոյացել Նաւասարդ - Ամանորի խորհրդանշանը՝ տօնածառը: Որպէսզի եղեւնի ծառ չհատանէին, նրա ճիւղերն էին կտրում ու բերում ամրացնում տօնածառի իրանի մետաղեայ կառուցին, որը եղեւնու տեսքով հսկայ տօնածառի էր վերածուած: Տրդատ, Մանուել, Մոմիկ ճարտարապետների արարման ոգու լոյսով յորդած նոր դարերի Հայկեան հանճար՝ Ալեքսանտր Թամանեանի մտքի թռիչքով բարձրացել էին հրապարակը գրկած սիւնազարդ-կամարակապ շէնքերը, Հայոց Հայկիսալի աստուծոյ Մուսասիւրի մեհեանն է այն, արեւ աստուած Միհրի լոյսն էր գրկում նրա որմերի վարդ քարերը, ծաղկում էին նրանք, քարէ խաղողի ողկոյցների էին կարմրում, նուռերն էին պայթում: Տօնածառը, բաբելոնեան աշտարակից աւելի բարձր էր, վառուած էր լոյսի հազար գոյներով, ծիածան գօտի կապում մէջքին: Բաբելացիք աշտարակ էին կառուցել, որ հասնէին Աստուծոյ գահին, Նախառնեց նրանց խօսքը, փլեց այն: Ընթերցող, տեսե՛լ ես Արմին-հայերի մայր

Շար.ը էջ 19



MARTIAL ARTS - ORGANIZED by

GAIDZ YOUTH ORGANIZATION



SEVAK HAKOBYAN

4th dan

INTERNATIONAL MASTER OF MARTIAL ARTS

WORLD RECOGNIZED MEMBER OF ADAPTIVE SPORTS

- ❖ MARTIAL ARTS
- ❖ SELF-DEFENSE
- ❖ FOR MEN, WOMEN, CHILDREN & PEOPLE WITH DISABILITIES OF ALL AGES

WORLD RECOGNIZED INSTRUCTOR

❖ FREE for PEOPLE With DISABILITIES - GREAT RATES for FAMILIES & STUDENTS

ADDRESS: 1060 NORTH ALLEN AVENUE, PASADENA, CA 91104

For registration and info text: 626-926-7224 or email: info@gaisz.net




FOLLOW US ON:

 @Gaidzyo;
  Gaidz Youth Organization;
  @GaidzYouth

ՄԱՐԱԶԴ



ՍԻԼՎԱ ՔԷՕՇԿԵՐԵԱՆ

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ քրոջ եւ հարազատին Սիլվա Քէօշկերեանի մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 23 Դեկտեմբեր, 2016ին, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 7 Յունուար 2017, առաւօտեան ժամը 9:30ին, Hollywood Forest Lawn գերեզմանատան Սպիտակ մատրան մէջ, ապա թաղումը նոյն գերեզմանատան մէջ:

Սգակիրներ՝ Գոյրը՝ Մինաս եւ Սոնա Մալճեան եւ զաւակները Ռաֆֆի եւ Փիթըր:

- Ձարմիկը՝ Փանոս եւ Նելլի Գարավարդանեան եւ զաւակը
- Ձարմիկը՝ Գարլո Քէշիչեան եւ զաւակները
- Ձարմիկը՝ Գօգօ Քէշիչեան եւ զաւակները
- եւ համայն հարազատներն ու բարեկամները:

Փոխան ծաղկեպակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել Մեթոտիսթ հինադանոցին Methodist Hospital Fund, 301 West Huntington Drive, Arcadia, CA 91066:

ՅԱՒԱԿՅԱԿԱՆ

ՍԻԼՎԱ ՔԷՕՇԿԵՐԵԱՆԻ մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութիւնն իր խորագգաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի համայն հարազատներուն, մասնաւորաբար քրոջ՝ Տէր եւ Տիկ. Մինաս եւ Սոնա Մալճեանին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ ՄԸ

Շարունակուած էջ 13-էն

Գրկիզուին ցորենի արտերը:
Յեղասպանութենէ ետք
Հայտերան աշիրաթի քիւրտերը,
որոնք մաս կազմած էին նաեւ
Համիտեան գունդերուն, կը
հաստատուին Ֆրլստանի մէջ:
Հագիւ 15 տարի անց պետութեան կողմէ
կը կոտորուին Ակրիի ապստամբու-

թեան միջոցին Արճէշի պաշարման
օգնած ըլլալու պատճառաւ:
Վերապրածները կ'աքտորուին դէպի
արեւմտեան քաղաքներ:
Այս բոլորը անգամ մը եւս յիշել կու տան
հայու մը կողմէ քիւրտի մը ուղղեալ
«Էմ թաղթէ նէ հըն շիվ ին»
(մենք նախածաշ էինք, դուք ընթ-
րիք կը դառնաք) խօսքը:
«Ակոս»

ԱՄԱՆՈՐԻ ՏՕՆԱԾԱՌ

Շարունակուած էջ 16-էն

ոստանի հրապարակում ճախրած տօնածառը, Աստուած չէր խռովել նրա անդորրը, այն բարձրանում էր «Վահագն Յարդազողի ձանապարհ»-ից՝ աստղեր վար բերելու, իրենց քարէ սրտի լերան գագաթին վառելու, որ Արմինա Հայաստանի լինելիութեան լոյսով հրավառուէր աշխարհը, որ իրենց յարատեւութեան հրաշքը աւետէին մոլորակի մարդկանց, իրենց դուշմաններին:

Հէքիաթներն պատումներն դրուագներով նախազարդ բազում կրպակներ կանգնել էին նրա շուրջ բոլորը: Տասնրեք օրեր գիշեր-ցերեկ պիտի վառուէր, փոքրերը նրա շուրջը իրենց մանկական հրճուանքի պարեր պիտի բռնէին, Չմեռ Պապին գրկած պիտի լուսանկարուէին, պիտի գնային կրպակներին քողարակներով, տօնական նուէրներ, այո, նաեւ հէքիաթներն պատկերազարդ գրքեր գնէին: Հայրեր ու մայրեր տարբեր կրպակներ էին այցելում, իրենց սիրասուն մանչերին, ազգականներին ու բարեկամներին նուէրներ, խաղալիքներ, դպրոցական մանչերին գրքեր պիտի գնէին, այո՛, գրքեր: Գիրք ընթերցելը աղօթքի խորհուրդի նման էր, իրենց նախնիները գրքեր էին պաշտել: Թուղթ չունէին, մագաղաթների վրայ գրեցին, վանքերի խուցերում սիրոյ ու ողբերգութեան մատենաներ, Գողթան աշխարհի հոգեզմայլ երգեր, Վարդանների հերոսապատումներ, Հայկագուն ցեղի պատմութիւն, Մաշտոցի «Վարք» գրեցին, Հելլէն իմաստունների մտքի լոյսը բերին Արմինա-Հայաստան: Այդ զարմանալու էր, ո՛չ, իրենց հայկեան զարմի արարչական ցեղի ոգու վսեմութեան, նախնիների Տիր աստուծոյ տիեզերական իմաստնութեան ջահի հրաբորբ լոյսի առկայքում էր:

Մանչերի անուշ ծիծաղով է բռնկել եղեւնին, քաշում էին նրա թեւերից, նրան գրկած պար էին եկել: Մանչերի կանչերից դողում էր եղեւնին, նրանց շոյանքի սարսուռից իրենց դէմքերին հոսում էր նրա կանաչ լոյսը: Նոր տարուայ երգերի հեղեղ էր հրապարակում, շատրուանն էր ուղեկցում մանչերի երգերին, լոյսի հազար-հազար գոյների ծով էին շատրուանի աւազանի ջրերը:

Հայրենի երկրի տներում պճնուած տօնածառն էր վառուում հազար ու մի լպտերիկներով, շողում գոյնզգոյն նախշերի խաղալիքներով, արդեօք այստեղ չէիւն իջել նաեւ իրենց նախնիների ստուերները, եւ այդ լոյսերի մէջ

չէին ժպտում աստղերի լոյսերով վառուած նրանց ակները: Մանչերը, իրենց տներ այցելած «Չմեռ Պապ»-ի հետ՝ պար էին բռնում տօնածառի շուրջը բոլորը, միաբերան երգում նրա գովքը՝

Տօնածառ ջան Տօնածառ, Ինչքան լաւն ես ու պայծառ կարծես հիմա նորէն իմ մանչերի հետ, իմ հայրենի սրտակէզ օճախում յաղթ կանգնած տօնածառի լոյսերի մէջ պար եմ բռնում, արի ու մի արբենայ, թէ՞ խենթանայ... Ինչո՞ւ այդպէս եղեւ:

Նաւասարդի առաջին լուսաբաց, «Առաւօտ Լուսոյ, Արեգակն արդար» իր կրակ վարսերի համբուրի ժպիտն էր կաթում մայր ոստանին, իր կրակ լոյսի շողերով հրապարակի եղեւնին էր վառում: Այ, հիմա էր հրապարակը բազմամարդ: Հայրեր, մայրեր եւ տատիկներ ու պապիկներ՝ մանչերին գրկած կամ թաթիկներից բռնած այցի էին գալիս եղեւնուն: Բոլորը միասին պիտի նկարուէին եղեւնու պատուանդին կանգնած «Չմեռ պապի» հետ, կամ առանձին: Երգում էին տօնածառին նուիրուած երգեր, պար բռնում, հազար-հազար գոյնի արեւավառ շատրուանի ջրալոյսով ողողում իրենց մանչերի երեսները: Եղեւնու առաջ կանգնել էին հէքիաթային դրուագներով նախազարդ բազում կրպակներ՝ դունչը որթատունկից կախուած խաղողի բոսոր գոյներով ողկոյցին յառած աղուեսը, պոչը սառուցին կալանուած գայլը, ծառի փչակից իր ձագուկը վար նետող կիտուն, տիրոջը լծկան կովերը տանող Սիմոնը, «Դերձակ» փիսոն վէճի բռնուած քաջալ շան հետ: Ընթերցող, հոգիդ արդեօք չի խռովում...:

Աշխարհի այս կողմն հասած Հայ, այստեղ հէքիաթային կրպակներով շրջապատուած Նաւասարդ-Ամանորի եղեւնու հրապարակ կա՞յ, չէ՞, չկայ: Ինչպէս ես տօնախմբում քու նախնիների Նաւասարդ-ամանորը, պատմո՞ւմ ես նրանց քու ցեղի պատումը, բանաստեղծներիդ արարած հէքիաթ պատումները: Ե՞րբ պիտի տանես քու մանչերիդ վարդ քարերով պատած «Տաճար»-ի մայր ոստանիդ հրապարակում կանգնած եղեւնին գրկած նրանց հետ պար բռնելու, նրանց սրտերը լցնելու քու նահապետի յաղթանակի կրակի ոգու շողերով, նրանց հոգիները վառելու վահագնի եղեգան բոցի կարմիրով:

Արմինա-Հայ, այստեղ չի՞ք Նաւասարդեան եղեւնի, չի՞ք քու մայրենի լեզուով երգող ջրերի շատրուան, չի՞ք վարդացած քարերով ծիածան կապած ոստան, քաղաքներ ու շէներ...:

OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

Ձեր Ծանուցումները Կատարեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՅ
ՓԱՍՍԻՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ՄՆԻԹԱՐԵԱՆԸ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՆՇԵՑ ՍՈՒՊԵՐԳՈՒՆՈՎ



Ֆուտբոլի Անգլիայի առաջնութեան 18-րդ տուրում «Մանչեսթեր Եունայթեդս» ընդունեց «Մանդերլեյնզ» եւ առաւելութեան հասաւ 3:1 հաշուով: Առաջին խաղակէստում շուեղ յարձակուող Զլատան Իբրահիմովիչի փոխանցումն արդիւնաւէտ օգտագործեց հոլանդացի պաշտպան Դեյլի Բլինդը: Իսկ երկրորդ խաղակէստում աչքի ընկաւ Իբրահիմովիչը: Վնասուածքից չետոյ ապաքինուած Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը 62-րդ րոպէին փոխարինեց անգլիացի կիսապաշտպան Ջեսի Լինգարդին եւ մրցակցի դարպասը 86-րդ րոպէին գրաւեց կրկին հարուածով: Գոլային փոխանցում կատարեց Իբրահիմովիչը: Աւելացուած առաջին րոպէին հիւրերը կարողացան խփել հեղինակութեան գոլը: «Մանչեսթեր Եունայթեդս» տարաւ չորրորդ անընդմէջ յաղթանակը եւ 33 միաւորով հաւասարուեց 5-րդ տեղում ընթացող Լոնդոնի «Տոտենհեմին»:

2016Թ. ԼԱԻԱԳՈՒՆ ՖՈՒՏՊՈՒԼԻՍՏՆԵՐԻ ՏԱՍՆԵԱԿԸ

Մատրիդի «Ռէյալի» եւ Պորտուգալիայի հաւաքականի յարձակուող կրիչախանու Ռոնալդուն գլխաւորել է 2016թ. աշխարհի լաւագոյն ֆուտպոլիստների տասնեակը բրիտանական The Guardian-ի վարկածով: Պարբերականը հրատարակել է անցնող տարուայ 100 լաւագոյն ֆուտպոլիստների վարկանիշային աղիւսակի վերջին մասը: 31-ամեայ Ռոնալդուն գրաւեցնում է առաջին տեղը: Առաջին եռեակում են նաեւ «Բարսելոնայի» յարձակուողներ Լիոնել Մեսին ու Լուիս Սուարեսը: Տասնեակում ընդգրկուել են նաեւ Անտուան Գրիզմանը («Աթլետիկո»), Նեյմարը («Բարսելոնա»), Գարեթ Բեյլը («Ռեալ»), Ռոբերտ Լեանդովսկին («Բաւարիա»), Պյեր-էմերիկ Օբամեանգը («Բորուսիա Դորտմունդ»), Ալեքսիս Սանչեսը («Արսենալ») եւ Ռիչարդ Մահրը («Լեյքեր Սիթի»): Դասակարգման աղիւսակը կազմուել է 45 երկրների 124 փորձագէտների քուէարկութեամբ: Յիշեցնենք, որ «Մանչեսթեր Եունայթեդսի» եւ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանն այս վարկածով 57-րդն է:

ՅՈՒՐԳԵՆ ԿԼՈՊ. «ԼԻԲԵՐՊՈՒԼԸ» ԿԱՐՈՂ Է ՊԱՅՔԱՐԵԼ ՏԻՏՐՈՍԻ ՅԱՍԱՐ

«Լիւբերպոլի» գերմանացի գլխաւոր մարզիչ Եուրգեն Կլոպը վստահ է, որ իր ղեկավարած թիմն այս մրցաշրջանում կարող է իրական պայքար մղել Անգլիայի ախոյեանի տիտղոսի համար: «Կարեւոր է, թէ «Լիւբերպոլն» ինչ թիմ է եղել 25 տարի առաջ: Կարեւոր է մեր այսօրուայ վիճակը: Մեր թիմը ներկայացնում է նոր սերունդ: Մենք գնահատում ենք անցեալի ֆուտպոլիստներին, սակայն չենք կարող օրինակ վերցնել նրանցից: Մենք պարտաւոր ենք կատարել մեր աշխատանքը: Պէտք է փորձենք հասնել տիտղոսի: «Լիւբերպոլը» մեծագոյն ակումբ է, իսկ մեր կազմը բաւականաչափ լաւն է ախոյեանի կոչման պայքարի համար», - Եուրգեն Կլոպի խօսքը մէջբերում է Sky Sports-ը: «Լիւբերպոլը» Անգլիայի ախոյեան չի դարձել 1990 թուականից: Ընթացիկ առաջնութեան 17 տուրից յետոյ թիմը 37 միաւորով երկրորդ տեղում է՝ առաջատար «Չելսիին» զիջելով 6 միաւոր:



ՖԻՖԱ-Ի ՎԱՐԿԱՆԻՇՈՒՄ ՅԱՅԱՍԱՆԸ ՄԵԿ ՏԵՐՈՎ ԲԱՐՁՐԱՅԵԼ Է

ՖԻՖԱ-ն հրապարակել է ազգային հաւաքականների Դեկտեմբեր ամսուայ վարկանիշային աղիւսակը, որտեղ Հայաստանի հաւաքականը 86-րդ տեղում է: Նախորդ ամսուայ համեմատ Արթուր Պետրոսեանի թիմը մէկ քայլ առաջ է: Առաջատարը Արժենթինայի հաւաքականն է: Լաւագոյն տասնեակում են նաեւ Պարագիւիան, Գերմանիան, Չիլին, Պելզիան, Կոլումբիան, Ֆրանսան, Պորտուգալիան, Ուրուգուայը եւ Սպանիան:

ՅՖՖ ՆԱԽԱԳԱՅ. ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ Է «ԼԱԻԱԳՈՅՆ ՏԱՍՆԵԱԿՈՒՄ ՈՉ ՄԻ ՖՈՒՏՊՈՒԼԻՍՏ ԶԱՆՃԱՐԵՂ ՕՊԵՐԱՑԻԱՆ»

Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիայի նախագահ Ռուբեն Հայրապետեանը ՀՖՖ պաշտօնական կայքում մեկնաբանել է Հայաստանի տարուայ լաւագոյն մարզիկի կոչման թեկնածուների ցուցակում եւ լաւագոյն մարզիկների տասնեակում Հայաստանի հաւաքականի առաջատար, անգլիական «Մանչեսթեր Եունայթեդի» լաւագոյն ֆուտպոլիստներից Հենրիխ Մխիթարեանի բացակայութիւնը: ՀՖՖ կայքը գրում է, որ «Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիայի մամուլի քարտուղարութիւնը բազմաթիւ զանգեր ու նամակներ է ստանում: Բոլորը վրդովուած ու զարմացած են, որ Հայաստանի ազգային հաւաքականի աւագ Հենրիխ Մխիթարեանը չի ընդգրկուել տարուայ լաւագոյն մարզիկի կոչման թեկնածուների թւում»: Այդ կապակցութեամբ ՀՖՖ նախագահը նշել է. «Բարձր գնահատականի եւ յարգանքի են արժանի նրանցից յուրաքանչյուրն՝ առանց խտրականութեան: Բայց եւ անուրանալի են Հենրիկ Մխիթարեանի նպաստն ու ձեռքբերումները «միլիարդների» մարզաձեւ ֆուտպոլի ասպարէզում, որոնց մասին գիտեն բոլորը, որոնց արժէքի եւ կարեւորութեան մասին գիտեն նոյնիսկ նրանք, ովքեր վասալային տրամաբանութեամբ մանացել են լաւագոյն մարզիկների ցուցակի կազմելու կարգի մասին հեքիաթներ հորինել: Սակայն այստեղ «վասալները» չեն, որ խնդիր են, նրանք միշտ էլ գտնուում են, այլ «ֆեդրալները», ովքեր զարմանալի յամառութեամբ եւ կուրուքեամբ չտեսնելու են տալիս ֆուտպոլը եւ ում թեթեւ ձեռքով իրականացում է «լաւագոյն տասնեակում ոչ մի ֆուտպոլիստ» «հանճարեղ» օպերացիան: Սա զուրկ է բարոյականութիւնից, եւ հենց նոյն «բարոյականութեամբ» էլ նոյն չինովնիկներն, ովքեր այսպէս արհամարհում եւ ստորադասում են ֆուտպոլը, որեւէ իրաւունք չունեն ֆուտպոլի մասին բառ անգամ խօսել»:

ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆԵԱՆԸ՝ ԶԱՅԱՍԱՆԻ ԼԱԻԱԳՈՅՆ ՄԱՐՁԻԿ



20 տարի անց Հայաստանին օլիմպիական ոսկէ մետալ պարգեւած Արթուր Ալեքսանեանը Հայաստանի մարզական լրագրողների ֆեդերացիայի վարկածով ճանաչուել է Հայաստանի 2016թ. լաւագոյն մարզիկ: Օլիմպիական ախոյեանը երրորդ տարին անընդմէջ է արժանանում այս մրցանակին: Դեկտեմբերի 15-ից անցկացուած քուէարկութեան արդիւնքում գիւմրեցի յունահռոմէական ոճի ըմբիշին յաջորդել է նրա թիմակից Միհրան Յարութիւնեանը, որը Ռիօ-2016 Օլիմպիական խաղերի եզրափակիչում պարտուել էր կողմնակալ մրցավարութեան պատճառով:

ԶԱՅԱՍԱՆԻ 10 ԼԱԻԱԳՈՅՆ ՄԱՐՁԻԿՆԵՐԸ 2016-ԻՆ

1. Արթուր Ալեքսանեան. օլիմպիական ախոյեան (հունահռոմէական ոճի ըմբշամարտ)
2. Միհրան Յարութիւնեան. օլիմպիական փոխախոյեան (յունահռոմէական ոճի ըմբշամարտ)
3. Սիմոն Մարտիրոսեան. օլիմպիական փոխախոյեան (ծանրամարտ)
4. Գոռ Մինասեան. օլիմպիական փոխախոյեան (ծանրամարտ)
5. Նազիկ Աւդալեան. Ռիօ-2016 Օլիմպիական խաղերի 5-րդ տեղ, 2016-ի Եւրոպայի ախոյեան (ծանրամարտ)
6. Յարութիւն Մերզիկեան. Ռիօ-2016 Օլիմպիական խաղերի 5-րդ տեղ, 2016-ի Եւրոպայի ախոյեան (սպորտային մարմնամարզութիւն)
7. Անդրանիկ Կարապետեան. 2016-ի Եւրոպայի ախոյեան (ծանրամարտ)
8. Հոփսիմէ Խուրշուդեան. 2016-ի Եւրոպայի ախոյեան (ծանրամարտ)
9. Վարչամ Բորանեան. 2016-ի Եւրոպայի ախոյեան (յունահռոմէական ոճի ըմբշամարտ)
10. Արթուր Դաւթեան. 2016-ի Եւրոպայի փոխչեմպիոն (սպորտային մարմնամարզութիւն)

կում են նաեւ Պարագիւիան, Գերմանիան, Չիլին, Պելզիան, Կոլումբիան, Ֆրանսան, Պորտուգալիան, Ուրուգուայը եւ Սպանիան: